ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

Նորություններ

Հետազոտություններ

Միջոցառումներ

ՀՈՒԼԻՍ
ՕԳՈՍՏՈՍ

#28

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

New Generation Humanitarian NGO
@NGNGOArmenia
ngngo.armenia
ngngo.armenia
+374(0)60378989
+374(0)60478989

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի 2017-20 թթ.-ի ռազմավարական պլանը արդեն մշակված է

2017 թ.-ի հուլիսի 17-18-ը Աղվերանում տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի արտագնա աշխատանքային հանդիպումը՝ մշակելու կազմակերպության 2017-20 թթ.-ի ռազմավարական պլանը:

Հանդիպման ժամանակ մշակվել են կազմակերպության նոր տեսլականը, առաքելությունը, ռազմավարական ուղղությունները և նպատակները, առաջիկա մեկ տարվա գործողությունների պլանը, վերանայվել են արժեքները, կատարվել են կազմակերպության PESTLE և SWOT վերլուծությունները:

Վերջնականացվեուց հետո այն կտեղադրվի «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի պաշտոնական

Կայացավ շատ սպասված մեդիտացիայի օրը ՆՍՀԿ-ում

Հուլիսի 19-ին կայացավ շատ սպասված մեդիտացիան «Նոր Սերունդ»-ում

Ինչպես և պլանավորված էր, մեդիտացիայի սկսզբում մասնակիցները սկսեցին զրուցել մեր հյուրի՝ Արփինե Գալֆայանի հետ, թե ինչ է առհասարակ մեդիտացիան, որոնք են նրա դրական կողմերը, որտեղ կարելի է անել մեդիտացիա:

Քննարկումները շատ ակտիվ էին, քանի որ մասնակիցները մեծ հետաքրքրությամբ ու ոգևորվածությամբ էին մասնակցում:

Արփինե Գալֆայանը նաև խոսեց բուսակերության, նաև այն հիմնական պատճառների մասին, ինչի արդյունքում մարդիկ որոշում են դառնալ բուսակեր: Պատճառներից է այն, որ, օրինակ, անձը չի օգտագործում մսամթերք, քանի որ մտահոգված է կենդանիների պահպանման խնդրով, կամ երբ կենդանուն սպանում են, նրա մարմնում արտադրվում են բացասական հակամարմիններ, ինչի արդյունքում դա կարող է փոխանցվել մեզ, կամ կարելի է չօգտագործել մսամթերք, որպեսզի մեր օրգանիզմը ավելի առողջ լինի և այլն:

Բուռն քննարկումներից հետո Ա.Գալֆայանը անկացրեց մեդիտացիան, որից հետո մասնակիցները կիսվեցին իրենց տպավորություններով: Քննարկումից հետո պարզ դարձավ, որ մեդիտացիան կարելի է համարել ստացված:

Նշենք, որ շահագռգիռ մարդիկ շատ էին, բայց աշխատանքի կամ այլ խնդիրներից ելենով չկարողացան մասնակցել:

ՆՍՀԿ թիմը պատրաստվում է այն շարունակական դարձնել:

«Առողջության իրավունք» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում փոքր դրամաշնորհի մրցույթի շնորհանդես

2017թ.-ի հուլիսի 27-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Տղամարդկան առողջության Եվրասիական կոալիցիայի» (ECOM) կողմից մեկնարկված «Առողջության իրավունք» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում փոքր դրամաշնորհի մրցույթի շնորհանդեսը:
Շնորհանդեսին մասնակցում էին ինչպես նորաստեղծ ՀԿ-ների ներկայացուցիչներ և ակտիվիստներ, այնպես էլ ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչներ:

Շնորհանդեսի ժամանակ ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց մեկնարկված դրամաշնորհի նպատակը, խնդիրներն ու թիրախ խմբերը:
Որից հետո մասնակիցներն իրենց հարցերն ուղղեցին ինչպես ՆՍՀԿ նախագահին, այնպես էլ տեսազանգի միջոցով ECOM-ի ծրագրերի ղեկավար Էլենա Գերմանին և իրավական հարցերով քննարկեցին աշխատանքային հարցերը Յուրի Յորսկիին:

Հակիրճ տեղեկատվություն՝
ԵԿՈՄ-ի մասին տեղեկատվություն
http://ecom.ngo
«Առողջության իրավունք» ծրագրի մասին տեղեկատվություն
http://ecom.ngo/regional-program/
Փոքր դրամաշնորհի մասին տեղեկատվություն
http://ecom.ngo/grants-program-2017/

«Քվիր հավաք». նոր ենթադրամաշնորհ «Ծիածան Հայաստան» նախաձեռնող խմբին

2017թ.-ի օգոստոսի 10-ին «Նոր Սերունդ> Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանի և «Ծիախան Հայաստան» նախաձեռնող խմբի ներկայացուցիչ Հայկ Հակոբյանի միջև կնքվեց փոքր ենթադրամաշնորհի պայմանագիր։ Համաձայն եթադրամաշնորհի շրջանակներում հաստատված «Քվիր հավաք» ծրագրի, վերջինիս նպատակն է հզորացնել ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստներին և աջակցել նրանց զգալ գնահատված այն աշխատանքի համար, որ ծավալում են Հայաստանում։

Ծրագիրը իրենից ներկայացնում է 2-օրյա հավաք Հայաստանի գյուղերից մեկում, որտեղ ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստները խոսելու են «ակտիվիզմ», «քվիր քաղաքականության», «ինչպե՞ս աջակցել մարգաբնակ ԼԳԲԻՔ+ անձանց» և այլ հետաքրքրաշարժ թեմաների մասին։

Մոնիթորինգային այց Հայաստանում Չեխիայի Հանրապետության Դեսպանությունից

2017 թվականի օգոստոսի 4-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի (այսուհետ՝ ՆՍՀԿ) գրասենյակ մոնիթորինգային այց կատարեցին Հայաստանում Չեխիայի Հանրապետության Դեսպանատան ղեկավարի տեղակալ, առաջին քարտուղար Անի Շագինյանովան և առևտրի և տնտեսական բաժնի ղեկավար Դավիթ Դիլանյանը։ Այցի նպատակն էր Հայաստանում Չեխիայի Հանրապետության Դեսպանատան, Անցումային Առաջխաղացման ծրագրի կողմից ֆինանսավորվող «ՔՀԿ-ներն ու ՁԼՄ-ներն առաջնագծում՝ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականության վերացման նպաստելով»

ծրագրի ընթացակարգի քննարկումը, որի ժամանակ դեսպանատան ներկայացուցիչները ՆՍՀԿ-ի աշխատակազմին ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը։ Իսկ ՆՍՀԿ աշխատակազմը ներկայացրեց մինչ օրս արված ծրագրային գործողությունները և այն բոլոր ռազմավարական փաստաթղթերը, որով առաջնորդվում է կազմակերպությունը ծրագիրն իրականացնելիս

Մեկնարկեց LIFE2017 տեղեկատվական հարթակը

2017թ.-ի օգոստոսի 7-ին, մեկնարկեց ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստների և համախոհների համար «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված «ԼԱՅՖ» (LIFE – Leadership, Information, Freedom, Equality) եռօրյա տեղեկատվական հարթակը:
Մասնակիցները մեծ ոգևորությամբ և ակնկալիքներով ժամանեցին միջոցառման վայր՝ նոր գիտելիքներով ու հմտություններով զինվելու և հետաքրքիր ու արդյունավետ ժամանակ անցկացնելու համար:
«ԼԱՅՖ» տեղեկատվական հարթակի նպատակն է ԼԳԲՏԻՔ+ համայնքի հզորացումը, սկսնակ ակտիվիստների գիտելիքների մակարդակի բարձրացումը, ակտիվիստական գործունեության կարողությունների զարգացումը, հանրային խոսքի հմտությունների ձեռքբերումը և համայնքի խնդիրները արդյունավետ ձևով արտաքին ոլորտում:

Ներկայացվելիք թեմաներն են՝

- Իրավունք և արժանապատվություն
- Կոնֆլիկտների հաղթահարում
- Խոսքի ազատություն և հանրային խոսքի հմտություններ
- Սեռականություն

LIFE եռօրյա տեղեկատվական հարթակը կազմակերպվում է Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում:

Իրավական գրագիտություն և ակտիվիզմի հիմունքները սեմինար

2017 թվականի օգոստոսի 21-ից Երևանում մեկնարկել է «Իրավական գրագիտություն և ակտիվիզմի հիմունքներ» թեմայով եռօրյա դասընթացը, որը իրականացվում է «Առողջության Իրավունք» ծրագրի շրջանակներում:
Դասընթացի ընթացքում Հայաստանից, Բելառուսից, Վրաստանից, Ղրղզստանից և Մակեդոնիայից մասնակիցները

կծանոթանան առողջության իրավունքի խթանման, խտրականության դեմ պայքարի միաջազգային և ազգային մեխանիզմների մասին, ինչպես նաև կստանան ՁԼՄ-ների հետ աշխատանքի վերաբերյալ պրակտիկ գիտելիքներ և շահերի պաշտպանության քարոզարշավների իրականացման վերաբերյալ:

Ծրագիրը Հայաստանում իրականացնում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոլիացիայի ֆինանսավորմամբ, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

Մեկնարկում ենք ՄԻԱՎ-ի վերաբերյալ լնդային տրանսուդատի հետազոտության իրականացումը

Ուրախ ենք տեղեկացնել, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն առաջին անգամ Հայաստանում մեկնարկում է թքի միջոցով ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորումը (ՄԻԱՎ-ի վերաբերյալ լնդային տրանսուդատի հետազոտության իրականացում) իր թիրախային խմբերի շրջանում, որը իրականացվելու է կազմակերպության գրասենյակի տարածքում կամավոր խորհրդատվության և հետազոտության վերապատրաստված մասնագետների աջակցությամբ:
Այս կապակցությամբ 2017թ.-ի օգոստոսի 2-ից ՀՀ ՁԻԱՀ-ի կանխարգելման Հնարապետական Կենտրոնում կազմակերպության աշխատակիցները մասնակցում են թքի միջոցով ՄԻԱՎ-ի վերաբերյալ թեստավորման վերապատրաստման դասընթացին, որի շրջանակներում կատարվում են նաև գործնական աշխատանքներ համապատասխան հմտությունները յուրացնելու և այնուհետև կիրառելու համար:

ՍԵՌԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՎ-Ի ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

- ԳԱՂՏՆԻ, ԱՆԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՎՃԱՐ
- ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ 20 ՐՈՊԵԻՑ

Այցելության օրերը և ժամերը
երկուշաբթիից կիրակի
10:00-24:00
Թումանյան 41 բն. 4

+374 (0)60378989
+374 (0)60478989

Արման Փիլոյան ՆՍՀԿ կամավոր, Ամառային ակադեմիայի մասնակից

Արման Փիլոյան ՆՍՀԿ կամավոր, Ամառային ակադեմիայի մասնակից

2017 թ.-ի Օգոստոսի 5-12, «Նոր Սերունդ» Մարդասիրական կազմակերպության ներկայացուցիչ, կամավոր Արման Փիլոյանը հրաշալի օրեր անցկացրեց Գերմանիայի Բարետալ քաղաքում՝ «Եվրոգերմանական երիտասարդությունը Եվրոպայում» կազմակերպության և Գերմանիայի ռուսալեզու երիտասարդության JunOst e.V. միության կողմից կազմակերպված ամառային ակադեմիայում: Մեր մասնակիցը ակադեմիայից վերադարձավ մեծ տպավորություններով և լավ հիշողություններով, նոր լավ ընկերներով, զինված նորանոր հմտություններով և հիանալի փորձառությամբ. «7 օր, 80 մասնակից, 4 խումբ և խարույկի վրա այրված 2 կիթառ: Սա նշանակում է Բարետալ: Բարետալը վայր է, որտեղ սկսում ես հավատալ հրաշքների, որտեղ էական չէ դու մասնագիտությամբ բժիշկ ես, հոգեբան, իրավաբան, թե երաժիշտ, որտեղ էական չէ ազգությունը, սեռը և դավանանքը: Սա ճամբար է, որը լեցուն է սիրով, հարգանքով ու հանգստությամբ: Այստեղ, մարդիկ մաքսիմալ իրական են, համարձակ և հոգատար: 7 օր, որոնք անցան մի ակնթարթի պես, որտեղ անցկացրեցինք [illegible] հիշողություններ մնացին ու լավ ընկերներ»:

Մեկնարկեց «ՁԼՄ-ներն ընդդեմ խտրականության» դասընթացը

2017 թ.-ի օգոստոսի 28-ին մեկնարկեց ՁԼՄ ներկայացուցիչների համար «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից, «ՔՀԿ-ներն ու ՁԼՄ-ներն առաջնագծում՝ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականության վերացման նպատակով» ծրագրի շրջանակներում, կազմակերպված «ՁԼՄ-ներն ընդդեմ խտրականության» քառօրյա դասընթացը:

Դասընթացի նպատակն է լրագրողների և բլոգերների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացումը՝ «Մարդու իրավունքներ. տեղական և միջազգային օրենսդրություն և կոնվենցիաներ», «Խոսքի ազատություն և ատելության խոսք», «Խարան և խտրականություն», «Խոշտանգում» թեմաների վերաբերյալ:

Դասընթացի ընթացքում ներկայացվելու են հետեւյալ թեմաները՝

Մարդու իրավունքներ. տեղական և միջազգային օրենսդրություն և կոնվենցիաներ

Խոսքի ազատություն և ատելության խոսք

Խարան և խտրականություն

Խոշտանգում

Դասընթացի աշխատանքային լեզուն հայերեն է:

Դասընթացը տևեց 4 օր՝ օգոստոսի 28-ից մինչև 31-ը:

«ՔՀԿ-ներն ու ՁԼՄ-ներն առաջնագծում՝ Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ խտրականության վերացման նպատակով» ծրագիրն իրականացվում է Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանության, Անցումային Առաջխաղացման ծրագրի ֆինանսական աջակցությամբ: